













տապնդեն զինքը, առանց դադար տալու խոնջած անձին անապարեց զորաց մնացորդով կտրել անցնել Ծոփաց եւ Աղձնեաց լեռները. անկէ շեղեցաւ դէպի հարաւ եւ բարձրանալով Իզալայի (այժմ Տուր-Աբդինի) լեռնաշղթան բռնեց Մծբինի ուղղութիւնը, հասնելու Միջագետք: Թէպէտ հարկ էր կուրել ճանապարհի զժուարութիւններու հետ, բայց ընտրեց այս ուղին, շուտով հասնելու համար Մծբին: Կ'անապարէր հոռոմէական հետապնդող բանակին չհանդիպած նետել ինք զինքը պարսկական Միջագետք, ուր երեքամեայ զինազարարի սահմանին մէջ գտնուելով, պիտի զերծանէր ամէն հետապնդումէ:

Մծբինէն ուղիղ ճանապարհով հասաւ Սոսրով Տիգրոն (575 աշնան) երկամեայ անչափ յոգնութիւններէ յետոյ սակաւ ինչ շունչ առնելու համար:

Մելիտենէի քով տեղի ունեցած այս երկօրեայ ճակատամարտները դարուն ամենամեծ պատերազմները կը ներկայացնեն: Անթիւ աւար, ի մէջ այլոց 24 փիղ, բաժին ինկաւ յաղթականներուն: Փիղերը Կոստանդնուպոլիս ուղարկուեցան ի տես ժողովուրդին: 573ին Դարայի առջեւ Հռոմայեցւոց կրած պարտութիւնը տոկոսով ետ վճարուած էր:

Այս յաղթութենէն ետքը Յուստինիանոս իւր բանակով քայլեց Հայաստան. նուաճեց զայն միւսանգամ Հռոմայեցւոց իշխանութեան տակ: Անկէ յառաջ խաղաց դէպի Ատրպատական եւ գերելով գերիելով հասաւ մինչեւ Կասպից ծով. ուր եւ ձմերկեց:

Թէպէտ չէր խորտակած պարսկական պետութեան ոյժը, բայց զգալիօրէն ցնցուած էր թագաւորին դիրքը, որ պատասխանատու էր կրած պարտութեան համար: Կ'երեւայ թէ ուղիղ է այն համբաւը, թէ Սոսրով Պարսկաստան վերադառնալէ ետքը օրէնք սահմանած ըլլայ, որ այնուհետեւ ոչ մէկ թագաւոր իրաւունք ունենայ անձամբ պատերազմ մղել: Այս օրէնքը կրնայ այն իմաստով մեկնուիլ, թէ թագաւորին պատերազմ մղելու եղանակը իր անյաջող հետեւութեան պատճառաւ տժգոհներու մէջ յայտնի թշնամութիւն յարուցած ըլլայ: Սոսրովն այնու աւելի սպառնական կերպարանք առաւ, որ հոռոմէական բանակը Ատրպատական միջամուխ եղած՝ վտանգ կը սպառնար ներքին նահանգներուն: Անոնց պաշտպանութեան համար հարկ տեսնուած էր պետութեան ներսերը

մեծ բանակ պահել. իսկ այս կը պահանջէր համապատասխան ծախք. եւ որովհետեւ կը պահպէին միջոցներ՝ բնականաբար պիտի նուազէր զօրքին ալ ոտձիկը, որ անխուսափելիօրէն պիտի ստեղծէր տժգոհութեան առիթ:

Սոսրով երկիւզ զգալով, թէ կարող է ասկէ ներքին յեղաշրջում մը ծագիլ, խոնարհեցաւ իւր առաջին հպարտութենէն, որուն անձնատուր էր Դարայի զբաւումովը: Այժմ ընծայեց ինքզինքը մէտ բանակցելու խաղաղութեան մասին: Իր կարգին նաեւ Տիրերիոս հակամէտ չէր խաղաղութեան. նա չէր կրնար յուսալ, թէ զինուորական յաջողութիւններն ապագային աւելի նպաստաւոր պիտի ըլլային, քան որ էին ներկայիս. վասն զի այն յաջողութիւնները, զորոնք ձեռք բերած էր Յուստինիանոս, պահուած էին նոր յաջողութեամբ մ'ալ. այս ինքն Ռոմանոս զօրավար (magister militum) արշաւած էր Սուանիա եւ զայն նուաճած հոռոմէական լուծին տակ: Այս պատճառաւ ալ այժմ, երբ Սոսրով իւր «փոքր» դեսպանը Նազոյէս Կ. Պոլիս ուղարկեց, խաղաղութեան մասին լրջօրէն բանակցելու համար, սիրով ընդառաջ զնաց անոր առաջարկին Տիրերիոս: Իր լիազօրները՝ Թէոփորոս, Չետումիոս, Յովհաննէս եւ Պետրոս երբ Թելա դ'Մանջալաթ եւ Պարսից լիազօրը Մերոտ Դարա հասան, միաբանեցան բանակցութեան վայր ընտրել Աթրաշլոն քաղաքիկը: 576 զարնան սկսած բանակցութիւնները: Տարի մը բովանդակ զուր վիճարանեցան, հաստատելու համար, թէ ո՞ր կողմն է յանցաւոր պատերազմին համար. ապա անցան սահմանալէճի հարցերուն, որ նոյնպէս երկար ձգձգուեցաւ: Երբ վերջապէս արամազրուած էին երկու կողմերը համաձայնութիւն մը գոյացնելու, թէ 1. Սուանիա մնայ Հռոմայեցւոց, իսկ 2. այլ կէտերու մէջ սահմանները վերահաստատուին նախկին վիճակի մէջ — status quo ante bellum, 3. պատերազմի տարիներու տարեվճարները նկատի չառնուին, 4. հայ ապստամբները, որոնց Յուստինոս հանդիսական երգամար պաշտպանութիւն խոստացած էր եւ Տիրերիոս յարգել կ'ուզէր այս խոստումը, իսկ Սոսրով անոնց յանձնումը կը պահանջէր, չյանձնուին — ահա 577 աշնան լուր հասաւ, թէ Յուստինիանոս Հայաստանի մէջ սրռչիչ պարտութիւն մը կրած է: Ասոր վրայ Սոսրով իւր խոստումը, թէ Դարայէն՝ միա-

նուազ վճարուած դոյնն զուժարի փոխարէն պիտի հրաժարի, ետ առաւ: Ասով թէեւ չընդհատեցան բանակցութիւնները, բայց հարկ էր զանոնք ի նորոյ սկզբէն սկսիլ:

Իրերը հետեւեալ կերպով այս կերպարանքը առած էին:

Յուստինիանոսի յաղթ բանակը, որ բարբարոսներէ կազմուած էր, գինովցած այս անակնկալ յաջողութենէն, սկսած էր հոռոմէական-զինուորական կարգապահութիւնը ոտնակոխ ընել: Արդէն այն պարագան, որ Յուստինիանոս մինչեւ 576 Յունիս անգործ մնաց, մինչ իւր բանակին ինչ ինչ զօրամասեր — զժուարաւ թէ իր հաւանութեամբ — թէ՛ թշնամույն նահանգներու եւ թէ՛ քրիստոնեայ եւ իբրեւ հոռոմէական պետութեան պատկան նկատուած Հայաստանի մէջ ասպատակութիւններ կը կատարէին, ուշագրաւ է: Հաւանօրէն այս զրուցիւնը շարունակուեցաւ մինչեւ այն ժամանակ, երբ տեսաւ Սպարապետը, թէ իր այս թուլացած բանակով այլ եւս անհնար է արշաւել միջամուխ պարսիկ պետութեան սիրտը. այս պատճառաւ ալ սրռչեց ի վերջոյ ամառուան արեւադարձին դառնալ Հայաստան: Մինչ ինքը հոս, ուր թշնամի չէր երեւար, շարունակեց պարծիլ իւր յաղթութեամբ, եւ, ինչպէս կը հաւաստէ Եւազը, զեխութեան եւ բազում անառակութեան անձնատուր կ'անցընէր ամառը, անդէն իւր անսանձ զինուորները կը կեղեքէին, կը հարստահարէին հայ երկրին գժբախտ ժողովուրդը, եւ կը զործէին հոն քստմնելի վայրագութիւններ:

ՏԱՄ-ԽՈՍՐՈՎ

Այս վիճակին մէջ էր կացութիւնը, երբ, 577ի աշնան, երեւցաւ հոն Տամ-Սոսրով, ժամանակի նշանաւորագոյն զօրագլուխը, ընտիր սպառազէն զօրքով: Կայսերական բանակին բոլորովին անակնկալ եղաւ անոր գալուստը: Սուճապը տիրեց բանակին, որ մատնուեցաւ վայրագ փախուստի: Տամ-Սոսրով զանդազօրէն հետեւեցաւ անոնց. եւ կրցաւ առանց սուրը պատեանէն հանելու նուաճել արեւմտեան եւ հարաւային Պարսկահայաստանը: Անիկա զինուած ոյժի բախեցաւ առաջին անգամ Ա. Հայոց սահմանին վրայ: Սերիոս կը դրէ (34). «Ապա եկն Տամ-Սոսրով եւ արար երկու կոխ, մի՛ ի Բասեան ի Բոլորապահակի, ուր Մուրց եւ Երասխ խտնին. եւ մի՛ ի Բագրեւանդ ի

Կըթնի. եւ յերկոսինն յաղթութիւն գործեաց մեծամեծ. եկաց երկուս ամս եւ զնաց»: Այս կրկին կոխներէն մին տեղի ունեցած ըլլալու է 577ին եւ եղած որոշիչ պատերազմ, որ առիթ տուած է Սոսրովի ջրելու այն համաձայնութիւնը, որուն շուրջը միաբանուած էր Աթրաշլոն զուժարուած խաղաղութեան ժողովի մէջ:

Ամբողջ Պարսկահայաստան ենթարկուած էր այժմ Պարսից. հրատարակուած էր թողութեան հրովարտակ, որմէ դուրս կը մնային միայն Հոռոմէացւոց քով ապաստանարան գտած ապստամբները:

Հռոմայեցւոց կրած այս չարաչար պարտութիւնը մասամբ զօրավարներու անմիաբանութեան արդիւնքն էր: Անոնք սկսան այժմ զիրար ամբաստանել Կայսեր քով: Հաւանօրէն այս պատճառաւ ուղարկուեցաւ Գրիգոր praefectus praetorio ծանրակշիռ գումարով մը բանակ, ի քննութիւն եւ ի կարգաւորութիւն իրաց: Իսկ Յուստինիանոս ետ կանչուեցաւ. անոր տեղ magister militum per Orientem եւ զօրավար ինքնազօր անուանուեցաւ Մաւրիկիոս (578):

(Շարունակելի): Լ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ԳԻՈՆԵՍԻՈՍ ԲԵՐՍԵԼԻԲԻՐ  
ՀԵԿԵՃԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԵՅՈՑ ԳԷՄ

(Շարունակութիւն):

ԳՂՈՒՆ Գ.\*  
Հայոց դէմ.  
Երկրորդ Սովորութիւն:

Թող մեր խօսքը ուղղուի հիմայ անոնց դէմ, որոնք արեւը ծագեցնէն ետք ճրագի կը զիմեն եւ Մեսիայի երեւումէն ետք Մովսէսի սովորութիւններուն կը հետեւին: Սուրբ Գրքին մէջ զրուած է. «Եթ օր բաղարջ պիտի ուտէք<sup>1</sup>»: Եկաւ Մեսիան՝ Մովսէսի տէրը եւ

\* Այս ու յաջորդ զլին համար հմմտ. Յովհ. Ժ. Բարչուշանի թուղթը. թրգմ. Վարդանան, խորհրդական հացի եւ բաժակին մէջ խտնուած ջրոյն շուրջ, էջ 37—54: Բարսաղիբի փաստարկութեանց մէջ յաճախ շատ մօտէն կ'ընթանայ Բարչուշանի հետ: Գէորդ Կաթ. կը պատասխանէ՝ Գիրք Թղթոց, էջ 338—345:  
<sup>1</sup> Եւր. ԺԲ. 15, զեւթն օր բաղարջ ուտիցիք: